Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի հանձնաժողովի
1998թ. սեպտեմբերի 18-ի
N45 որոշմամբ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Է Ն Ե Ր Գ Ե Տ Ի Կ Ա Յ Ի Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության էներգետիկայի
հանձնաժողովի

«___»_____ 1998թ.
N __ որոշմամբ

Հանձնաժողովի նախագահ՝

_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետությունում ջերմային էներգիայի բաշխման գործունեության

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

№_____ _____էջից

ԵՐԵՎԱՆ - _____ թ.

1. Սահմանումներ

Հանձնաժողով - ՀՀ էներգետիկայի հանձնաժողով՝ էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին, որը գործում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն պատվիրակված լիազորությունների հիման վրա:

Լիցենզիա - Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունք:

Լիցենզավորված անձ - էներգետիկայի բնագավառում սույն Լիցենզիայով ջերմային էներգիայի փոխադրման (փոխադրման և բաշխման) գործունեություն իրականացնելու իրավունք ստացած իրավաբանական անձ:

Արտադրող - ջերմային էներգիայի արտադրության Լիցենզիա ստացած իրավաբանական անձ:

Փոխադրող - ջերմային էներգիայի փոխադրման Լիցենզիա ստացած իրավաբանական անձ:

Բաշխող - իրավաբանական անձ, որին Հանձնաժողովի կողմից տրվել է ջերմային էներգիայի տեղափոխման և (կամ) բաշխման գործունեություն իրականացնելու Լիցենզիա:

Բաշխում - կազմակերպաիրավական, տնտեսական և տեխնիկական գործառույթների համակարգ, որի միջոցով կատարվում է Սպառողների ջերմամատակարարումը:

Սպառող (բաժանորդ) - ջերմամատակարարող ձեռնարկության ջերմային ցանցին սույն կանոնների և այլ նորմատիվ ակտերի պահանջներին և տեխնիկական պայմաններին համապատասխանող միացում ունեցող և ջերմամատակարարող ձեռնարկության հետ ջերմային էներգիայի մատակարարման /առքուվաճառքի/ պայմանագիր կնքած իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Ջերմային էներգիայի փոխադրման և (կամ) բաշխման ցանցեր (Ջերմային ցանցեր) - ջերմային էներգիայի մայրուղային, բաշխման խողովակաշարերի, ջերմային էներգիայի բաշխման կետերի, դրանց հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների ու օպերատիվ կառավարման համալիրների (ներառյալ կարգավարական ծառայությունները) կազմակերպական, տեխնիկական և (կամ) տնտեսական կապերով ու աշխատանքային ռեժիմներով միավորված համակարգեր, որոնց միջոցով իրականացվում են ջերմային էներգիայի փոխադրումը և (կամ) բաշխումը արտադրության Լիցենզիա ունեցող անձանցից բաշխման Լիցենզիա ունեցող անձանց կամ անմիջապես Սպառողներին:

Ֆորս մաժոր - Արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների (տարերային աղետներ, ռազմական գործողություններ, էներգոռեսուրսների (վառելիքի, ջրի) մատակարարման համակարգերի վթարներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ), տվյալ պայմաններում Լիցենզավորված անձից անկախ առաջացած անհաղթահարելի ուժի հետևանքներ, որոնք մասամբ կամ ամբողջությամբ, անհնար են դարձնում լիցենզավորված գործունեության իրականացումը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2.1. Սույն Լիցենզիան ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

2.2. Սույն Լիցենզիան տրվում է անժամկետ:

3. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու տարածքը

3.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձին իրավունք է տրվում լիցենզավորված գործունեություն իրականացնել N1 հավելվածում սահմանված տարածքում:

4. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու էներգատեղակայանքներ

4.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է N2 հավելվածում նշված էներգատեղակայանքներով:

5. Լիցենզավորված գործունեության բովանդակությունը

5.1. Սույն Լիցենզիայով Լիցենզավորված անձին լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից 3.1 կետով սահմանված տարածքում տրվում է՝

ա) Սպառողներին ջերմային էներգիա բաշխելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք:

բ) Ջերմային էներգիան Արտադրողից և (կամ) Փոխադրողից գնելու և վաճառելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք:

գ) Ջերմային էներգիան Արտադրողից և (կամ) Փոխադրողից ստանալու և Սպառողներին առաքելու կարգավարական, օպերատիվ ղեկավարման և շահագործման գործունեություն:

5.2 Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզավորված գործունեության էությունը կազմող կարգավարման, օպերատիվ ղեկավարման և շահագործման գործառույթները պայմանագրով կամ որևէ այլ կարգով փոխանցել (օտարել) այլ անձի:

6. Լիցենզավորված գործունեության պայմանները

6.1. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի սույն Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից սահմանված նորմատիվ ակտերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

6.2 Լիցենզավորված անձը Լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի տնտեսական արդյունավետության սկզբունքներին, Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներին անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան:

6.3 Լիցենզավորված անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ահմանված կարգով ապահովել իր տարածքում նոր Սպառողների ջերմամատակարարումը:

6.4. Լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով, բաշխման ցանցով փոխադրել արտադրողի և (կամ) փոխադրողի և (կամ) Սպառողի սեփականությունը հանդիսացող ջերմային էներգիան:

6.5. Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունը, ինչպես նաև գույքի պահպանությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

6.6. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի բաժնետեր, փայատեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

6.7. Լիցենզավորված անձի կանոնադրական հիմնադրամում 35 տոկոսից ավելի մասնակցություն ունեցող բաժնետեր կամ փայատեր իրավունք չունի առանց Հանձնաժողովի թույլտվության ձեռք բերել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն:

6.8. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել առևտրային հաշվառքի բոլոր սարքերի պետական ստուգաչափումը:

6.9. Լիցենզավորված անձի և այլ անձանց միջև կնքվող ջերմամատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:

6.10. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում Լիցենզավորված գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող ջերմամատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրերը ենթակա են գրանցման՝ Հանձնաժողովում:

6.11. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, Հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն և հաշվետվություններ՝

- բանկերում ունեցած հաշիվների մասին,
- տեխնիկական հսկողության իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
- անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
- հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկա - տնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
- երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին,
- տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացման ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման՝ Հանձնաժողովի հետ:

6.12. Լիցենզավարված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:

6.13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է սահմանազատված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող գործունեության այլ տեսակների հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:

6.14. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը հանրապետական մամուլում հրապարակել նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Հրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ:

6.15. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ:

6.16. Լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած Լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

6.17. Ջերմային էներգիայի առավելագույն սակագները սահմանում է Հանձնաժողովը: Լիցենզավորված անձը կարող է կիրառել Հանձնաժողովի կողմից սահմանված սակագներից ցածր սակագներ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Հանձնաժողովի կողմից սահմանված սակագներից ցածր սակագներ կիրառելու հետևանքով Լիցենզավորված անձի հնարավոր վնասները հաշվի չեն առնվում սակագների վերանայման ժամանակ:

6.18. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձը իր նախաձեռնությամբ, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, կարող է հայտ ներկայացնել ջերմային էներգիայի սակագների վերանայման վերաբերյալ:

6.19. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված ընթացակարգով կարող է վերանայել ջերմային էներգիայի գործող սակագինը (սակագները):

6.20. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականացնում է ըստ սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապատասխան հոդվածների (ուղղությունների), ապահովելով շահագործման հուսալիությունն ու անվտանգությունը: Ծախսերի կառուցվածքի փոփոխության անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը համապատասխան հիմնավորումներով նախապես դիմում է Հանձնաժողով՝ համաձայնեցման համար:

6.21. Հանձնաժողովը սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:

6.22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին հայտնել իր կողմից ջերմային էներգիայի ընդունման/բաշխման սահմանափակման հանգեցրած (հանգեցնող) չկանխատեսված հանգամանքների մասին՝ անհապաղ:

6.23. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես հայտնել Հանձնաժողովին այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Լիցենզիայի պայմանների խախտումների:

6.24. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, ջերմամատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրերի և ՀՀ օրենսդրությանը համապատասխան ջերմամատակարարման դադարեցման կամ սահմանափակման դեպքում համապատասխան ծառայությունների միջոցով տեղեկացնել Սպառողներին:

7. Լիցենզավորված գործունեության վերահսկում

7.1. Սույն լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը Հանձնաժողովը իրականացնում է իր կողմից սահմանված կարգով:

7.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչները ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:
Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

7.3. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային տեխնիկայի կանոնները ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. Տուգանքներ, կասեցում և զրկում

8.1. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը իրականացվում է Հանձնաժողովը՝ համագործակցելով պետական այլ իրավասու մարմինների հետ:

8.2. Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տուժերը.

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարականներ,
բ) Լիցենզիայի կասեցում,
գ) Լիցենզիայից զրկում

Նշված տույժերի կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Հանձնաժողովը կարող է տուգանել Լիցենզավորված անձին:

8.3 Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը ևԼիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածով և ՀՀ օրենսդրությամբ:

8.4 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:

8.5 Լիցենզավորված անձի վրա 8.2 կետով նախատեսված տույժերը չեն տարածվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

9. Լիցենզիայի դրույթների և պայմանների փոփոխություն

9.1 Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով, Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

9.2. Լիցենզավորված անձի իրավական-կազմակերպական ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է Լիցենզիայի վերագրանցման կամ նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր Լիցենզիա ստանալու հայտով անհապաղ դիմել Հանձնաժողով:

9.3. Լիցենզավորված անձը 5-օրյա ժամկետում ծանուցագրով տեղեկացնում է Հանձնաժողովին իր հիմնադիր փաստաթղթերում, իրավաբանական հասցեի, և բանկային հաշվեհամարների փոփոխությունների մասին:

10. Այլ պայմաններ

_____

_____

_____

_____

_____

11. Ծանուցում

11.1. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի ստացման պահից կամ, եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով՝ ներկայացման պահից:

Լիցենզավորված անձի փոստային կարգաթիվը _____
Հասցեն
_____

Անվանումը _____

Բանկային հաշվեհամարները _____ _____
_____

Տնօրենի (նախագահի) անունը, ազգանունը _____

Ի վկայություն սույնի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը սույն Լիցենզիան «_____» _____ _____ թ. տրամադրել է

_____
(ընկերության անվանումը)

_____
(իրավաբանական հասցեն)

Գրանցման ամսաթիվը

«_____»_____ _____ թ.

Գրանցման համարը

N _____

_____
Պատասխանատու անձի ստորագրությունը, անունը, ազգանունը

Ð³í»Éí³Í 1

Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի հանձնաժողովի
1998թ. սեպտեմբերի 18-ի
N45 որոշման N3 հավելվածի

Էներգետիկայի բնագավառում էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի բաշխման լիցենզիա ստանալու համար ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ»

փաստաթղթի կազմը և բովանդակությունը

_____ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության անվանումը)

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

1. Լիցենզավորվող գործունեության տարածքի (սպասարկման տարածքի) անվանումը և համառոտ նկարագրությունը:
2. Լիցենզավորվող գործունեության տարածքը (սպասարկման տարածքը) ՀՀ մարզային բաժանման կամ կոնկրետ մարզի քարտեզի (քարտեզի պատճենի) վրա (չափացույցը ցանկացած՝ 1:20000-ից մինչև 1:5000 տիրույթում):
3. Լիցենզավորվող գործունեության տարածքի (սպասարկման տարածքի) առանձնահատկությունները, այդ թվում տարածքի որոշ գոտիներում բաշխում իրականացնող այլ տնտեսավարող սուբյեկտների առկայությունը և նրանց հետ պայմա-նական սահմանի և սահմանազատման կետերի նկարագրությունը:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի հանձնաժողովի
1998թ. սեպտեմբերի 18-ի
N45 որոշման N3 հավելվածի

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի Հանձնաժողով

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ

_____ _____
(Լիցենզիայի դասիչը)_____ (Լիցենզիայի N)

ԼԻՑԵՆԶԻԱՆ տրվել է _____
(Լիցենզավորված անձի լրիվ անվանումը)

_____

Ցուցակ

ջերմային էներգիա բաշխման էներգատեղակայանքների

Էներգատեղեկայանքի անվանումը	Էներգատեղեկայանքի տեխնիկական բնութագիրը	դրվածքային հզորությունը **(գկալ/ժամ)**	շահագործման հանձնելու տարեթիվը	